ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 օգոստոսի 2012 թվականի N 316-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 58 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2009 թվականի ապրիլի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առողջության առաջնային պահպանման հաստատություններում բուժօգնության որակի ապահովման համակարգի ներդրման մասին>> N 58 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետի 3-րդ պարբերության <<*առաջատար մասնագետ*>> բառերը փոխարինել <<*առողջապահության բաժնի պետ*>> բառերով,

2) 11-րդ կետի <<*մարզպետի տեղակալ Լ. Միքայելյանի*>> բառերը փոխարինել <<*մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Մ. Գարեգինյանի*>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ